ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Վ. Լ. ԿԱՏՎԱԼՅԱՆ

ՄԻ ՔԱՆԻ ՆԿԱՏԱՌՈՒՄ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՐՈՇՅԱԼ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դերանունների խոսքիմասային յուրահատկություններից մեկը նրանց քանակության սահմանափակությունն է: Տարբեր հեղինակներ (2,120-123. 4, 167-190) արդի արևելահայ գրական լեզվում ներկայացնում են 8-9 տասնյակ դերանուններ: Նյութական իմաստ ունեցող որևէ այլ խոսքի մասի բառապաշար այս առումով համեմատելի չէ դերանունների հետ և չի կարող ճշգրիտ հաշվարկվել ու բառ առ բառ ներկայացվել, և թերևս դրա կարիքը չկա էլ, որովհետև այլ խոսքի մասերի շրջանակներում մեծ թվով բառեր խմբավորվում են իրենց ընդհանուր հատկանիշներով, այդ խոսքի մասերի ընդհանուր հատկանիշների հետ միասին նկարագրվում են նաև բառախմբերի հատկանիշները:

Դերանվան տեսակներից յուրաքանչյուրն ընդգրկում է ընդամենը մի քանի (առավելագույնը՝ մեկից մինչև մեկուկես տասնյակ) բառեր, որոնք որպես կանոն հանդես են բերում զանազանություններ իմաստային, ձևաբանական, կիրառական, կապակցական և այլ առումներով: Ահա թե ինչու արդի հայերենի դերանունները կարելի է նկարագրել ամբողջականորեն՝ ներկայացնելով դրանք բառ առ բառ: Դա թույլ կտա վեր հանել դերանունների թե ընդհանրությունները և թե՝ յուրահատկությունները:

Հիմք ընդունելով հայ լեզվաբանության մեջ դերանունների մասին արդեն ասվածը (Մ.Աբեղյան, Գ.Ջահուկյան, Ս.Աբրահամյան, Մ.Ասատրյան, Հ.Բարսեղյան) այս աշխատանքում փորձել ենք համակողմանիորեն ներկայացնել արդի հայերենի որոշյալ դերանուններն առանձին դեպքերում նորովի մեկնաբանելով և դրանց իմաստային ու կապակցական հատկանիշների նկարագրության մեջ լրացումներ կատարելով:

Հայ քերականագիտությունը որոշյալ դերանունները բաժանում է երեք խմբի (2,118. 4,183-184). Առաջին խմբում ընդգրկված դերանունները **ամենքը, բոլոր(ը)**, առարկաների քանակական ամբողջություն են ցույց տալիս՝ առանց առարկաներն առանձին - առանձին նշելու: Երկրորդ խմբի դերանունները՝ **ամեն, ամեն մի (ամեն մեկը), ամեն ինչ, ամեն ոք, յուրաքան-**

յուր, յուրաքանչյուր ոք, առարկաների քանակական **ամբողջություն** են ցույց տալիս դրանք առանձին-առանձին նշելով: Երրորդ խմբի դերանունները **ողջ, ամբողջ, համայն, ամենայն**, ցույց են տալիս մեկ առարկայի ամբողջություն: Այս բաժանման մեջ թերևս կարելի է կատարել մեկ ճշգրտում. մեր կարծիքով, դերանունների առաջին խմբում պետք է ընդգրկել նաև **ամենը** բառը: Այս ձևը հոմանիշ է **բոլորը** դերանվանը և իրականում առարկաների քանակական ամբողջություն է ցույց տալիս՝ առանց առանձինները մատնանշելու: Ակնհայտ է, որ **ամենը գիտեմ, ամենից առաջ, ամենից գեղեցիկ** կապակցությունները համարժեք են հետևյալներին՝ **բոլորը գիտեմ, բոլորից առաջ, բոլորից գեղեցիկ**:

Ինչ վերաբերում է **ամեն** ձևին, ապա այն իրոք երկրորդ խմբի դերանուն է: Կապակցվելով միայն եզակի գոյականի հետ՝ **ամեն** դերանունը ցույց է տալիս ամբողջը, իսկ եզակի գոյականը ներկայացնում է առանձինների տեսակը. այդպիսով, նման կապակցությունը մատնանշում է առանձիններն ամբողջի մեջ, ինչպես որ, ասենք, **յուրաքանչյուր** դերանվամբ կապակցությունները, օր.՝ **յուրաքանչյուր ուսանող - ամեն ուսանող**:

Անդրադառնանք արդի հայերենի որոշյալ դերանուններին առանձին - առանձին:

Ինչպես նշեցինք, առաջին խմբում ընդգրկում ենք **ամենը, բոլոր(ը), ամենը** բառերը:

ԱՄԵՆԸ. Ցույց է տալիս անձերի ամբողջություն: Հարաբերակից է գոյականներին: Ուղիղ ձևում միշտ ունի որոշիչ հոդ: Չունի թվի քերականական կարգ, իմաստով հոգնակի է: Ենթարկվում է **Ի** հոլովման: Ներգոյական հոլով չունի, քանի որ անձնանիշ է: Կարող է ստանալ դիմորոշ հոդեր՝ **ամենքս, ամենքդ**: Արանց հետ հաճախ գործածվում են **մենք, դուք** անձնական դերանունները **մենք ամենքս, դուք ամենքդ**: Նախադասության մեջ ունենում է գոյականին հատուկ պաշտոններ: **Ամենքը** ենթակայի հետ ստորոգյալն ունի հոգնակի թիվ, օր. **Նրան ողջունեցին ամենքը: Ամենքս, ամենքդ** ենթակաների հետ ստորոգյալը դեմքով համաձայնում է, օր. **Ամենքս գիտենք մեր անելիքը. Ամենքդ արժանի եք դրվատանքի:**

ԲՈԼՈՐ (Ը). Բոլոր ձևը հարաբերակից է ածականներին: Դառնում է հոգնակի գոյականի որոշիչ՝ ցույց տալով առարկաների քանակային ամբողջություն, օր.՝ **բոլոր երեխաները, բոլոր գրքերը:** Գործածվում է և՛ անձնանիշ, և՛ առարկայանիշ բառերի հետ, որոնք ուղիղ ձևում ունենում են որոշյալ առում:

Բոլորը ձևը հարաբերակից է գոյականներին՝ Եվ անձնանիշ է, և առարկայանիշ: Չունի թվի կարգ, իմաստով հոգնակի է: Ենթարկվում է **Ի** հոլովման: Իբրև անձնանիշ՝ կարող է ստանալ դիմորոշ հոդեր՝ **բոլորս, բոլորդ:** Վերջին-

ներս հաճախ գործածվում են **մենք, դուք** անձնական դերանունների հետ՝ **մենք բոլորս, դուք բոլորդ**:

Նախադասության մեջ **բոլորը** դերանունն ունենում է գոյականին հատուկ պաշտոններ: Իբրև առարկայանիշ **բոլորը** դերանունը զուգորդվում է **այս, այդ, այն** ցուցական դերանունների հետ **այս բոլորը, այդ բոլորը, այն բոլորը**: Երբ այսպիսի կապակցությունները հանդես են գալիս ենթակայի դերում, դրանց ստորոգյալն ունենում է եզակի թիվ. օր. **Այդ բոլորը վաղուց հայտնի է մեզ. Այս բոլորը պատրաստվել է քեզ համար**: Ընդհանրապես, ենթակայի դերում առարկայանիշ **բոլորը** դերանունն ունենում է եզակի ստորոգյալ (**Բոլորը արձանագրված է այդ փաստաթղթում. Բոլորը մտացածին է և կեղծ**), բայց եթե նախադասության մեջ առկա է ենթակայի հոգնակիությունն ակնարկող որևէ բառ, ստորոգյալն ունենում է հոգնակի թիվ (**Բոլորն արդեն *արկդեռում* են. Բոլորն *իրենց* վրա կրում են ձեռնարկության դրոշմանիշը**): Անձնանիշ **բոլորը** ենթակայի հետ միշտ գործածվում է հոգնակի ստորոգյալ. **Բոլորը սպասում են նրա վերադարձին. Բոլորը գնացել են թատրոն**: Բացառական հոլովի **բոլորից** ձևը մասնակցում է ածականի գերադրական աստիճանի կազմությանը. **բոլորից գեղեցիկ**:

Բոլոր(ը) դերանվան ընդհանրական հարաբերության իմաստը ժխտվում է **ոչ** բառով. **ոչ բոլոր(ը)**: Սա արդեն ունենում է մասնական հարաբերության իմաստ:

Ժխտական այս ձևն ունեցող նախադասության ստորոգյալը հաստատական է. **Ոչ բոլոր գրքերն ես կարդացել. Ոչ բոլորն են կարդացել այդ գիրքը**:

ԱՄԵՆԸ . Հարաբերակից է գոյականներին: Չի կարող համարվել **ամենքը** դերանվան եզակի, որովհետև երկուսն էլ, իմաստով հոգնակի լինելով, անտարբեր են թվի քերականական կարգի նկատմամբ: Եթե **ամենքը** դերանունը անձնանիշ է, ապա **ամենը** դերանունը առարկայանիշ է: Այս դերանունը ենթարկվում է **Ի** հոլովման:

Ամենը դերանունը նախադասության մեջ ունենում է գոյականին հատուկ պաշտոններ: Հաճախ իբրև լրացում ունենում է **այս, այդ, այն** ցուցական դերանունները **այս ամենը, այդ ամենը, այն ամենը**. այդպես է հատկապես ենթակայի դերում, ընդ որում **ամենը** ենթակայի հետ ստորոգյալը միշտ եզակի է. **Ամենն արդեն հայտնի է մեզ. Այդ ամենը շատ տարօրինակ է. Այն ամենը, ինչ գրված էր մատյանում, մեզ շատ հուզեց**:

Բացառական **ամենից** ձևը մասնակցում է ածականի գերադրական աստիճանի կազմությանը **ամենից գեղեցիկ**:

Ամենը դերանվան ընդհանրական հարաբերության իմաստը **ոչ** բառի զուգորդմամբ վերածվում է մասնականի. **Նա վերադարձրեց ոչ ամենը**:

Որոշյալ դերանունների երկրորդ խմբում են **ամեն, յուրաքանչյուր(ը)** բառերը և դրանցով բաղադրված **ամեն մի (ամեն մեկը), ամեն ինչ, ամեն ոք, յուրաքանչյուր ոք** կազմությունները:

ԱՄԵՆ. Հարաբերակից է ածականներին: Լրացնում է ինչպես անձնանիշ, այնպես էլ առարկայանիշ գոյականների. **ամեն մարդ, ամեն սեղան,** ընդ որում լրացյալը միշտ եզակի է և ունի անորոշ առում: **Ամեն** դերանունն **անգամ** բառի հետ ձևավորում է ժամանակի պարագա. **Ամեն անգամ ուրախ լուրեր է բերում: Ոչ** բառի առկայությունն **ամեն** դերանվան ընդհանրական իմաստը փոխարինում է մասնականով. **Ոչ ամեն մարդ կաներ այդ քայլը:**

ԱՄԵՆ ՄԻ. Հարաբերակից է ածականներին: Կարող է լրացնել և անձնանիշ, և առարկայանիշ գոյականների: Սրա որոշյալը հանդիսացող գոյականը միշտ եզակի թիվ և անորոշ առում ունի. **ամեն մի ուսանող, ամեն մի գիրք:** Սրա ժխտականի ձևն է **ոչ մի,** որն ունեցող նախադասության ստորոգյալը ևս ժխտական է լինում. **Նա ոչ մի գիրք չի կարդացել:**

ԱՄԵՆ ՄԵԿԸ. Հարաբերակից է գոյականներին և անձնանիշ է, և առարկայանիշ: Ենթարկվում է **Ի** հոլովման: Չունի թվի կարգ. համատեղում է հոգնակիության և եզակիության իմաստները՝ ակնարկելով առանձինները ամբողջի մեջ: Ենթակայի դերում ունենում է եզակի ստորոգյալ. **Ամեն մեկն իր գործն է անում. Ամեն մեկն իր յուրահատուկ կազմությունն ունի:** Իբրև անձնանիշ՝ այս դերանունը կարող է ստանալ դիմորոշ հոդեր **ամեն մեկս, ամեն մեկդ,** սրանց հետ ստորոգյալը դիմային համաձայնություն չի ունենում. **Ամեն մեկս մի հոգս ունի. Ամեն մեկդ պիտի գնա մի ուղղությամբ:** Եթե նման նախադասություններն իրենց կազմում ունենում են հոգնակի թվի առաջին և երկրորդ դեմքերի համապատասխան անձնական դերանուններ, ապա ստորոգյալը դեմքով և թվով համաձայնում է դրանց հետ. **Ամեն մեկս մեր հոգսն ունենք. Ամեն մեկդ ձեր գործը պատվով կատարեք:**

Ամեն մեկը դերանունը կարող է ունենալ հոգնակի բացառականով լրացում. նման կապակցությունը համարժեք է **ամեն մի** դերանվան և եզակի ուղղականի կապակցությանը. **ուսանողներից ամեն մեկը — ամեն մի ուսանող:**

Ոչ բառի զուգորդմամբ ընդհանրական իմաստը վերածվում է մասնականի. **Ոչ ամեն մեկը կդիմեր այդ քայլին:** Այդ կառույցն ունեցող նախադասության ենթական, ինչպես երևում է նաև բերված նախադասությունից, հաստատական է:

Ամեն մեկը դերանունն ունի ժխտական ձև՝ **ոչ մեկը,** որն ունի նույն հատկանիշները, ինչ հաստատական ձևը (ոչ մեկի, ոչ մեկս, ուսանողներից ոչ մեկը): **Ոչ մեկը** դերանունն ունեցող նախադասության ստորոգյալը ժխտական է:

ԱՄԵՆ ՈՔ. Հարաբերակից է գոյականներին, բայց քերականական որևէ

կարգ չունի: Համատեղում է հոգնակիության և եզակիության իմաստներ: Անձնանիշ է: Նախադասության մեջ դառնում է միայն ենթակա, որի հետ ստորոգյալը եզակի թիվ է ունենում. **Ամեն ոք ցանկանում է օգնել տուժածին:**

Ունի ժխտականի **ոչ ոք** ձևը, որը չունի թվի կարգ. ենթարկվում է Ի հոլովման: Լինելով անձնանիշ չունի ներգոյական հոլով: **Ոչ ոք** ժխտականն ունեցող նախադասության ստորոգյալը ժխտական է. **Ոչ ոք չուզեց լսել նրան: Ոչ ոքի** տրականը որոշիչ հոդ չի ընդունում, ունի **ոչ–ոքի** նույնահունչ համանունը:

ԱՄԵՆ ԻՆՉ. Հարաբերականից է գոյականներին: Չունի թվի կարգ: Համատեղում է հոգնակիության և եզակիության իմաստներ: Ենթարկվում է Ի հոլովման: Այս դերանվան որոշյալ առումով գործածությունը սովորական չէ: Կարող է ստանալ ստացական հոդեր. **ամեն ինչս, ամեն ինչդ:**

Այս դերանունը առարկայանիշ է:

Ամեն ինչ ենթակայի ստորոգյալն ունենում է եզակի թիվ **Ամեն ինչ նախկինի պես իր տեղում էր:**

Այս դերանունն ունի **ոչինչ** ժխտական ձևը, որը հատկանիշներով նույնանում է **ամեն ինչ**–ի հետ: **Ոչինչ** դերանունն ունեցող նախադասության ստորոգյալը ժխտական է:

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ(Ը). Այս դերանվան անորոշ ձևը հարաբերակից է ածականներին: Կարող է լրացնել ինչպես անձնանիշ, այնպես էլ առարկայանիշ գոյականների: Սրա լրացյալ գոյականը միշտ եզակի և անորոշ է. **յուրաքանչյուր գիրք, յուրաքանչյուր աշակերտ:**

Յուրաքանչյուրը ձևը հարաբերակից է գոյականներին. և անձնանիշ է, և առարկայանիշ: Չունի թվի կարգ. համատեղում է եզակիության և հոգնակիության իմաստներ: Ենթարկվում է Ի հոլովման: Իբրև ենթակա ունենում է եզակի թվով արտահայտված ստորոգյալ. **Յուրաքանչյուրը ձգտում էր առաջ անցնել մյուսներից:** Ստանում է դիմորոշ հոդեր. **յուրաքանչյուրս, յուրաքանչյուրդ:** Այս ձևերի հետ ստորոգյալը դեմքով չի համաձայնում. **Յուրաքանչյուրս աշխատում է հանձնարարությունը կատարել ժամանակին. Յուրաքանչյուրդ կստանա համապատասխան մրցանակ:** Եթե այսպիսի նախադասություններում առկա են հոգնակի թվի առաջին և երկրորդ դեմքերի համապատասխան անձնական դերանուններ, ապա ստորոգյալը դեմքով և թվով համաձայնում է դրանց հետ. **Յուրաքանչյուրս մեր լուման ունենք այդ գործում.**

Յուրաքանչյուրդ պիտի ձեր ուշադրության կենտրոնում պահեք այդ հարցը:

Յուրաքանչյուրը ձևը կարող է ունենալ հոգնակի բացառականով արտահայտված լրացում **ուսանողներից յուրաքանչյուրը:** Այսպիսի կապակցու-

թյունը համարժեք է **յուրաքանչյուր** ձևի և եզակի անորոշ գոյականի կապակցությանը. **յուրաքանչյուր ուսանող:**

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈՔ. Հարաբերակից է գոյականներին. անձնանիշ է: Չունի քերականական որևէ կարգ: Համատեղում է եզակիության և հոգնակիության իմաստներ: Նախադասության մեջ միշտ ենթակա է, որն ունենում է եզակի ստորոգյալ. **Յուրաքանչյուր ոք խոսում էր իր մայրենի բարբառով:**

Կարծում ենք, **ոչ ոք** ձևը կարող է համարվել նաև այս դերանվան ժխտականը:

Որոշյալ դերանունների երրորդ խումբը կազմում են **ողջ, ամբողջ, համայն, ամենայն** բառերը:

ՈՂՋ(Ը). Անորոշ ձևը հարաբերակից է ածականներին: Կարող է լրացնել և առարկայանիշ, և անձնանիշ գոյականների: **Ողջ** դերանվան առարկայանիշ որոշյալները սովորաբար տարածական և ժամանակային ընդգրկման իմաստ ունեցող, ինչպես նաև նյութի անուն գոյականներ են (**ողջ դաշտը**, անտառը, երկիրը, տարին, ամառը, օրը, ալյուրը, ջուրը), անձնանիշ որոշյալները հավաքական իմաստով գոյականներ են (**ողջ** մարդկությունը, մտավորականությունը, ժողովուրդը, ազգը): Նման կապակցություններում հաճախ տեղանունը ունենում է հավաքական գոյականի իմաստ. **Ողջ դպրոցն էր եկել. Ողջ գյուղը դաշտում էր. Ողջ քաղաքը հուզված էր:**

Ողջ դերանվան լրացյալը միշտ որոշյալ առում ունի, բացառություն են կազմում ժամանակի որոշ անուններ, օր. **ողջ գիշեր, ողջ ձմեռ:**

Ողջը ձևը հարաբերակից է գոյականներին: Առարկայանիշ է: Չունի թվի կարգ: Սակավ է հանդիպում խոսքում, սրա հոլովական ձևեր ևս չեն հանդիպում: Նախադասության մեջ սովորաբար խնդիր է դառնում. **Ողջը վերցրու և հեռացիր:**

ԱՄԲՈՂՋ(Ը). Անորոշ ձևը հարաբերակից է ածականներին: Իմաստով և կիրառությամբ նույնանում է **ողջ** դերանվան հետ:

Ամբողջը ձևը հարաբերակից է գոյականներին, իմաստով նույնանում է **ողջը** ձևի հետ, բայց շատ ավելի գործածական է: Ենթարկվում է **Ի** հոլովման: **Ամբողջը** ենթակայի ստորոգյալը եզակի է. **Ամբողջը ինձ արդեն հայտնի է:**

ՀԱՄԱՅՆ. Հարաբերակից է ածականներին: Լրացնում է միայն հավաքական իմաստ ունեցող գոյականների. **համայն** մարդկությունը, հայությունը: Քիչ գործածական է: Սրա լրացյալը ունենում է որոշյալ առում:

ԱՄԵՆԱՅՆ. Հարաբերակից է ածականներին: Սովորաբար գործածվում է վերացական գոյականների հետ: Սա փոխառություն է գրաբարից, գործածվում է վերամբարձ ոճ ստեղծելու համար, որվում է բառի ուղիղ ձևի կամ գործիական հոլովի վրա. **ամենայն բարիք, ամենայն** լրջությամբ, ուշադրությամբ, սիրով:

Նկատի ունենալով ասվածը որոշյալ դերանունները նախ և առաջ դասակարգում ենք ըստ առարկայական թե հատկանշային իմաստ ունենալու, ինչի կարևորությունը նշել է նաև Ս. Ասատրյանը (4,184), այնուհետև դասակարգումները շարունակում ենք այդ երկու խմբերի ներսում.

Արդի հայերենի հատկանշային իմաստ ունեցող որոշյալ դերանուններն են **ամեն, ամեն մի, բոլոր, յուրաքանչյուր, ողջ, ամբողջ, համայն, ամենայն:**

Այս դերանուններն իրենց հերթին կարող են ենթարկվել հետևյալ դասակարգումների.

1. Ըստ լրացյալի թվի կարգի՝
   ա) միայն հոգնակի լրացյալ ունեցող — **բոլոր,**
   բ) միայն եզակի լրացյալ ունեցող — **ամեն, ամեն մի, յուրաքանչյուր, ամենայն,**
   գ) նյութի, ժամանակի, տարածության, հավաքականության իմաստով լրացյալ ունեցող — **ողջ, ամբողջ,**
   դ) միայն հավաքականության իմաստով լրացյալ ունեցող — **համայն**:
2. Ըստ լրացյալի որոշյալության կարգի
   ա) անորոշ առումով լրացյալ ունեցող — **ամեն, ամեն մի, յուրաքանչյուր, ամենայն,**
   բ) որոշյալ առումով լրացյալ ունեցող — **բոլոր, ողջ, ամբողջ, համայն**:

Առանձին դեպքերում **ողջ** և **ամբողջ** դերանունները կարող են գործածվել նաև անորոշ լրացյալների հետ, եթե դրանք ժամանակի անուն են. **ողջ ամառ, ամբողջ գիշեր**:

3. Ըստ լրացյալի անձ/իր հատկանիշի՝
   ա) միայն անձի անուն լրացյալ ունեցող — **համայն,**
   բ) միայն իրի անուն լրացյալ ունեցող — **ամենայն,**
   գ) և անձի, և իրի անուն լրացյալներ ունեցող — **բոլոր, ամեն, ամեն մի, յուրաքանչյուր, ողջ, ամբողջ**:

Առարկայական իմաստ արտահայտող որոշյալ դերանուններն են. **ամենքը, ամենը, ամեն մեկը, ամեն ինչ, ամեն ոք, բոլորը, յուրաքանչյուրը, յուրաքանչյուր ոք, ողջը, ամբողջը:**

Այս դերանունները դասակարգում ենք հետևյալ կերպ.

1. Ըստ անձ/իր հատկանիշի՝
   ա) անձ ցույց տվող դերանուններ — **ամենքը, ամեն ոք, յուրաքանչյուր ոք,**
   բ) իր ցույց տվող դերանուններ — **ամենը, ամեն ինչ, ողջը, ամբողջը,**

գ) և անձ. և իր ցույց տվող դերանուններ — **բոլորը, յուրաքանչյուրը, ամեն մեկը**:

2. Ըստ հոդառության

ա) դիմորոշ հոդ ստացող — **ամենքը, բոլորը, ամեն մեկը, յուրաքանչյուրը,**

բ) ստացական հոդ ստացող — **ամեն ինչ,**

գ) ս, դ հոդեր չստացող — **ամենը, ամեն ոք, յուրաքանչյուր ոք, ողջը, ամբողջը**:

3. Ըստ հոլովի քերականական կարգի

ա) հոլովվող դերանուններ — **ամենքը, ամենը, ամեն մեկը, ամեն ինչ, բոլորը, յուրաքանչյուրը, ամբողջը,**

բ) չհոլովվող դերանուններ — **ամեն ոք, յուրաքանչյուր ոք**:

Ողջը դերանվան հոլովական ձևերը հնարավոր են, սակայն խոսքում գրեթե չեն հանդիպում:

4. Ըստ ենթակա - ստորոգյալ հարաբերության մեջ ստորոգյալի թվի

ա) եզակի ստորոգյալի հետ կապակցվող — **ամենը, ամեն ոք, ամեն ինչ, ամեն մեկը, յուրաքանչյուր ոք, յուրաքանչյուրը, ողջը, ամբողջը,**

բ) հոգնակի ստորոգյալի հետ կապակցվող — **ամենքը,**

գ) և հոգնակի, և եզակի ստորոգյալի հետ կապակցվող — **բոլորը**:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ս. Աբրահամյան, Արդի հայերենի դերանունները, Երևան, 1956:
2. Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն. Երևան, 1969:
3. Ս. Աբրահամյան, Ն.Պառնասյան, Հ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Ձևաբանություն, Երևան, 1974:
4. Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն, Երևան. 1989:
5. Հ. Բարսեղյան, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Երևան, 1980:
6. Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:

В. КАТВАЛЯН

НЕКОТОРЫЕ СООБРАЖЕНИЯ ОБ ОПРЕДЕЛЕННЫХ МЕСТОИМЕНИЯХ АРМЯНСКОГО ЯЗЫКА

Комплексное рассмотрение семантических, морфологических и функциональных признаков каждого из определенных местоимений позволяет составить о них целостное представление. Наряду с семантической классификацией разграничены местоимения с предметным и с признаковым значением. Далее, последние классифицируются по признакам дополняемого: число, определенность, лицо—предмет. Местоимения с предметным значением классифицируются по определенности, падежу, числу, соотношению подлежащее—сказуемое, а также в зависимости от указания на лицо или предмет.

V. KATVALYAN

NOTES ON DEFINITE PRONOUNS IN ARMENIAN

The complex study of semantic, morphological and functional features of each of the definite pronouns of Modern Armenian reveals the following: together with the semantic classification the author defines other features, which may be used as principle of classification, such as number, case and other categorial features.